

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ.ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՆԻ ՎԱՍԻԼԻ**

**ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ  
ՂԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ԺԳ.00.02-«Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»  
(ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

**ԱԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ-2016**

*Ատենախոսության թեման հաստատվել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական  
պետական ինստիտուտում*

<b>Գիտական ղեկավար՝</b>	<b>մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ֆ.Գ. Ղազարյան</b>
<b>Պաշտոնական ընդդիմախոսներ՝</b>	<b>մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Պ. Հովակիմյան</b>  <b>Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Լ.Ա. Սամվելյան</b>
<b>Առաջատար կազմակերպություն՝</b>	<b>Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ</b>

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. մարտի 17-ին  
ժամը 12<sup>00</sup>-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական  
համալսարանում գործող ԲՈՂ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական  
խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. փետրվարի 17-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,**

**մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ՝**



**Ա.Հ.Սվաջյան**

## ԱՏԵՆԱԽՈՍԻԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ: Ամեն տարի դպրոց են հաճախում երեխաներ՝ տղաներ և աղջիկներ, իրենց բնորոշ մտավոր, հոգեկան, կենսաբանական և իհարկե, շարժողական զարգացման առանձնահատկություններով: Մինևույն ժամանակ դպրոցն էլ պատրաստվում է երեխաների, և ոչ թե տղաների և աղջիկների, հետ հանդիպման: Մանկավարժական գրականության մեջ ամեն ինչ միջինացված է, առանց հաշվի առնելու երեխայի սեռը, չկան հատուկ ծրագրեր և մեթոդիկաներ առանձին-առանձին տարբեր սեռի երեխաների համար (Վ.В.Тарасенко, 2007; Ֆիզիկական ..., 2007; В.Д.Еремеева, 1998; Т.В.Мукушева, 1998): Կրթական համակարգն անտեսում է սովորողների սեռային առանձնահատկությունները, ուսուցանելով և դաստիարակելով նրանց՝ առանց հաշվի առնելու բնության և հասարակասեռական գլխավոր օրենքը՝ երկձևությունը (Н.Н.Кунджу, 1998; А.А.Чекалина, 2006; Н.К.Радуна, Е.Ю.Терешенкова, 2006; Ю.С.Куршакова, 1982 և այլք): Ընդ որում, սեռական երկձևության հատկանիշների ուսումնասիրումը կարող է նոր որակական տեղեկատվություն տալ մարդու մոտ շարժողական նորմերի տատանումների մասին:

Գենդերային հիմնախնդիրը մանկավարժության, հատկապես ֆիզիկական դաստիարակության մանկավարժության մեջ առավել քիչ է ուսումնասիրված: Հարկ է նշել, որ ֆիզիկական դաստիարակության գործող պետական ծրագիրը (2007) նախատեսված է միջին վիճակագրական սովորողի համար, իսկ բուն գործընթացը բավարար չափով հաշվի չի առնում դպրոցականի գենդերային առանձնահատկությունները՝ բացառությամբ ավագ դասարանների: Սակայն, սեռային տարբերությունները երեխաների մոտ առկա են ծննդյան պահից սկսած (В.П.Филух, Н.А.Фомин, 1980; Т.Бендас, 2005 և այլք): Ուստի օրյեկտիվ գիտական տեղեկությունները սեռական երկձևության առկայության, կամ հակառակը՝ բացակայության մասին ամենաէական կերպով կարող են ազդել ֆիզիկական դաստիարակության ռազմավարության վրա:

Վերը շարադրվածն ընդգծում է գենդերային տարբերականացման անհրաժեշտությունը ֆիզիկական դաստիարակության գործընթացում՝ դպրոցականների տարբեր շարժողական ընդունակությունների մշակման համապատասխան միջոցների և մեթոդների մասով:

Սույն հետազոտության արդիականությունը պայմանավորված է թեմայի բարդությամբ, բազմապլանայնությամբ և ոչ բավարար ուսումնասիրվածությամբ: Գենդերային մոտեցման տարբերակված իրականացման գործընթացի գիտամեթոդական ապահովման անհրաժեշտության և ֆիզիկական դաստիարակության պրակտիկայում համապատասխան փորձարկված մեթոդների բացակայության միջև հակասությունն էլ ընդգծում է աշխատանքի ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ է հիմնավորել ֆիզիկական դաստիարակության գործընթացում սեռական երկձևության գործակցի կիրառումը, որպես տարբերակված մոտեցման չափանիշ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԸ կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացն է՝ հաշվի առնելով նրանց գենդերային առանձնահատկությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱԿՆ կրտսեր դպրոցականների շարժողական ընդունակությունների մշակման տեխնոլոգիան է գենդերային տեսակետից:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐԿԱԾԸ: Ենթադրվում էր, որ ֆիզիկական դաստիարակությունը դպրոցում, առողջարարական, կրթական և դաստիարակչական խնդիրների լուծման հետ մեկտեղ կարող է միջոց հանդիսանալ ոչ միայն սովորողների գենդերային սոցիալականացման, այլ նաև նրանց շարժողական պատրաստվածության կատարելագործմանը՝ հաշվի առնելով սեռական երկձևությունը: Սեքոդաբանորեն այնքան էլ օրինաչափ չէ միջին վիճակագրական ցուցանիշների շրջանակներում բացատրել շարժողական ընդունակությունների զարգացման անհատական առանձնահատկությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔՆ ԵՆ կազմում անհատի ձևավորման գործընթացում ուսուցման և դաստիարակության որոշիչ դերի մասին ժամանակակից գիտական պատկերացումները (A.C.Быгомская, Б.Г.Ананьев, А.Н.Леонтьев), ընդհանուր դիդակտիկական սկզբունքները (B.A.Сластенин), ժամանակակից գենդերային հետազոտության (С.А.Бем, Е.П.Ильин, Ա.Ա.Նալչաջյան, Լ.Ջաքարյան), ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության դրույթները և օրինաչափությունները (A.П.Мамсеев, Ֆ.Գ.Ղազարյան):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Աշխատանքի նպատակն ու վարկածը կանխորոշեցին հետևյալ հիմնական խնդիրների լուծումը. ուսումնասիրել սեռական երկձևության ֆենոմենը կրտսեր դպրոցականների շարժողական ընդունակությունների դրսևորման գործում, մշակել մոդելային սանդղակներ սովորողների ֆիզիկական վիճակը գնահատելու համար, մշակել և մանկավարժական փորձարարությամբ հիմնավորել դպրոցականների շարժողական պատրաստության մեթոդիկան՝ հաշվի առնելով սեռական երկձևության գործակիցը, պատրաստել մեթոդական առաջարկություններ ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ: Առաջադրված խնդիրների լուծման նպատակով օգտագործվել է հետազոտության մեթոդների համապատասխան ապարատ՝ մանկավարժական, հոգեբանական, կենսաբանական, կազմաբանական, սոցիոլոգիական բնույթի աղբյուրների համեմատական վերլուծություն, էմպիրիկ հետազոտության մեթոդներ՝ դիտում, համեմատում, մանկավարժական թեստավորում, անտրոպոմետրիա,

մանկավարժական գիտափորձ, բժշկական հսկողություն, մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ: Գրականության տեսական վերլուծությունը, ուսուցիչների գործնական աշխատանքի փորձի ուսումնասիրությունն ու վերլուծությունը հնարավորություն ընձեռեցին ֆիզիկական դաստիարակության գործընթացում գենդերային մոտեցման կիրառման արդյունավետության հարցերի բացահայտումը:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱԶՄԸ:** Հետազոտությունն անցկացվել է 3 փուլով: Հետազոտության համար փորձարարական հիմք են հանդիսացել Երևան քաղաքի թիվ 4, 52, 76 և 132 հանրակրթական դպրոցները: Հետազոտության բոլոր փուլերում ընդգրկված են եղել 1-4-րդ դասարանների երկու սեռի ավելի քան 220 հարցվողներ և 860 դպրոցականներ: Հետազոտության ընթացքում իրականացվել է տարբեր հատկանիշների և ցուցանիշների 16340 չափում:

**ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:** Ատենախոսական աշխատանքը հանդիսանում է Հայաստանում ֆիզիկական դաստիարակության գործընթացում գենդերային մոտեցման ներդրման հետազոտությունների սկիզբը: Եզգրտվել են կրտսեր դպրոցականների շարժողական պատրաստության ցուցանիշների տարիքային փոփոխությունների առանձնահատկությունները և մշակվել են սովորողների ֆիզիկական վիճակի գնահատման մոդելային սանդղակներ: Փորձագիտորեն հիմնավորվել է շարժողական պատրաստության միջոցների և մեթոդների տարբերակված ընտրության մեթոդիկական հաշվի առնելով սեռական երկձևությունը:

**ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ** կայանում է նրանում, որ մշակվել է կրտսեր դպրոցականների շարժողական ընդունակությունների կատարելագործման գիտափորձնափորձված մեթոդիկական՝ հաշվի առնելով սեռային առանձնահատկությունները և դրանց գնահատման եղանակները: Հետազոտությունը որոշակի ներդրում ունի հանրակրթական դպրոցում ֆիզիկական դաստիարակության համակարգում գենդերային մոտեցման իրականացման տեսական հիմունքների մշակման գործում, ընդլայնում և լրացնում է գիտելիքներն այդ ոլորտում:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Ստացված արդյունքները կարող են նպաստել հանրակրթական դպրոցում մանկավարժական գործունեության փորձի կատարելագործմանը, տղաների և աղջիկների ֆիզիկական պատրաստության միջոցների և մեթոդների տարբերակված ընտրությամբ: Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել նոր ուսումնական ծրագրերի և ձեռնարկների մշակման մեջ, հաշվի առնելով աշակերտի սեռային առանձնահատկությունները, ինչպես նաև ֆիզկուլտուրային և մանկավարժական ուսումնական հաստատություններում մասնագիտական առարկաների ուսումնասիրման ժամանակ:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԿՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ** պայմանավորված են հիմնախնդրի հետազոտման նկատմամբ ամբողջական մոտեցմամբ, գենդերային մոտեցման

մասին ժամանակակից պատկերացումների հետազոտման կազմակերպման և տրամաբանության միասնականությանը, օբյեկտի, նպատակի, խնդիրների և տրամաբանության հետազոտման մեթոդների համարժեքությանը: Հետազոտության հավաստիությունը ձեռք է բերվել նաև բնագիր լեզվով աղբյուրների մեծ զանգվածի ուսումնասիրմամբ:

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՀԵՏԵՎՅԱԼ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

1. Ֆիզիկական դաստիարակության համակարգը հանրակրթական դպրոցում դեռևս բավարար չափով հաշվի չի առնում սովորողների գեներային առանձնահատկությունները, ինչը դժվարացնում է ուսուցման և դաստիարակության գործընթացի կազմակերպումը:

2. Գեներային մոտեցումը շարժողական ընդունակությունների մշակման գործում, որպես ֆիզիկական դաստիարակության գործընթացի տարբերակման հիմք կրտսեր դպրոցում:

3. Սեռային առանձնահատկությունների հաշվառման վրա հիմնված ֆիզիկական պատրաստության մեթոդիկական թույլ է տալիս առավել արդյունավետ իրականացնել սովորողների շարժողական ընդունակությունների մշակումը:

4. Կրտսեր դպրոցականների ֆիզիկական պատրաստության ոչ բավարար արդյունավետությունը հիմնավորող գործոններից մեկն է ուսումնական ծրագրերում գիտականորեն հիմնավորված առաջարկությունների բացակայությունը՝ առանց հաշվի առնելու սեռական երկձևության հատկանիշը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ:** Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է համակարգչային 128 էջում, ներառում է 27 աղյուսակ և 4 նկար:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, նպատակը, օբյեկտը, առարկան, գիտական վարկածը, սահմանված են հետազոտության խնդիրները և մեթոդները, աշխատանքի գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

**ԱՌԱՋԻՆ ՊԼՈՒՄԸ** վերնագրված է «Հետազոտության գրական նախադրյալները» ու բաղկացած է չորս ենթագլխից: Այստեղ նշվում է, որ վերջին տասնամյակում գեներային հիմնահարցն առավել ակտիվ է զգացնել տալիս մարդուն վերաբերող տարբեր գիտություններում՝ մարդաբանություն, մանկավարժություն, հոգեբանություն, սոցիոլոգիա, կազմաբանություն, ժառանգաբանություն և այլն: Այնուամենայնիվ, ըստ գրական տեղեկությունների գեներային հետազոտությունների

տեսակներում բացակայում են հարցերը՝ կապված դպրոցականների ֆիզիկական դաստիարակության խնդիրների հետ:

Քննարկելով գենդերային ուսուցման և դաստիարակության հարցերը, չի կարելի շրջանցել համատեղ և առանձին ուսուցման հակասական մոտեցումների հարցը: Աշխարհի մի շարք երկրներում գոյություն ունեն դպրոցական ուսուցման կազմակերպման երկու մոդելներ: Առաջին մոդել՝ ամերիկյան, որում տղաներն ու աղջիկները սովորում են համատեղ: Երկրորդ մոդել՝ Եվրոպական, որտեղ տղաների և աղջիկների համար գոյություն ունեն տարբեր դասարաններ և դպրոցներ:

Սույն գլխում կոնկրետ օրինակներով ցույց են տրվել տղաների և աղջիկների միջև տարբեր ընդունակությունների դրսևորումների էական տարբերությունները, որոնք կարելի է բաժանել կենսաբանական և սոցիալական կատեգորիաների (T.B.Бендас, 2005): Հետազոտության արդյունքները միանշանակ վկայում են սեռական երկձևության մակարդակի էական տարբերությունների օգտին՝ կապված ինչպես պատմական բնույթի պատճառների, այնպես էլ տարբեր հատկանիշների աճի պրոցեսների առանձնահատկությունների հետ (A.A.Евмеев, 2008; O.B.Вашетина, 2011 ս ձր.): Այդ տարբերությունների աստիճանի բացահայտումը սեռական երկձևության հատկանիշների հաշվարկի օրինակով կարևոր և արդիական խնդիր է:

Ցավոք, գենդերային մանկավարժական հետազոտությունները սովորող երիտասարդության ֆիզիկական դաստիարակության ոլորտում գրեթե բացակայում են: Ֆիզիկական դաստիարակությունը Հայաստանի հանրակրթական հաստատություններում բավարար չափով հաշվի չի առնում սովորողների գենդերային առանձնահատկությունները: Դա էլ բացասաբար է ազդում աճող սերնդի առողջության և ֆիզիկական վիճակի վրա:

Գրական աղբյուրների վերլուծության և ընդհանրացման հիման վրա հանգել ենք այն եզրակացության, որ ֆիզիկական դաստիարակությունը դպրոցական օնտոգենեզում կարող է կարևոր միջոց հանդիսանալ սեռադերային դաստիարակության և տարբերականացման համար: Գլխի ամփոփումը մեզ թույլ է տալիս ընդգծել և փորձարկել կրտսեր դպրոցականների ֆիզիկական դաստիարակության գործընթացում գենդերային տարբերականացման օգտագործման հեռանկարային մոտեցումներ:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼԽՈՒՄ՝ «Կրտսեր դպրոցականների շարժողական պատրաստվածությունը գենդերային տարբերությունների տեսանկյունից» քննարկվել են 1-4-րդ դասարանի 860 երկու սեռի աշակերտների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության ցուցանիշների համեմատական վերլուծության արդյունքները սեռական երկձևության տեսանկյունից: Համեմատվել են 8 թեստերի ցուցանիշներ՝ արագաշարժություն, արագաուժային հատկանիշներ, մկանային ուժ, հավասարակշռության պահպանման կարողություն, ճարպկություն,

շարժումների հաճախականություն և ճշգրտություն: Բացահայտվել է, որ կրտսեր դպրոցական հասակում բարելավվում են երկու սեռի սովորողների շարժողական պատրաստվածությունը բնութագրող բոլոր ցուցանիշները: Սակայն տեղաշարժերը տեղի են ունենում անհամաչափ և ոչ միաժամանակ ու արտացոլում են տարիքային զարգացման հայտնի օրինաչափությունները (И.А.Аржавский, 1982; М.М.Безруких, 2002; Д.А.Фарбер, 2009 և др.):

Սեռական տարբերությունները շարժողական պատրաստակա-  
նության առումով դպրոցականների մոտ սկսում են դրսևորվել սկսած 3-4-  
րդ դասարանից և տարիքի հետ այդ դրսևորումը մեծանում է, ինչի մասին  
են վկայում ուսումնասիրվող շարժողական ընդունակությունների բացար-  
ձակ արժեքները:

Սույն հետազոտության համար մեծ հետաքրքրություն է ներկայաց-  
նում սեռական երկձևության ուսումնասիրումը տարբեր շարժողական  
ընդունակությունների դրսևորումներում: Այս հարցում առաջարկվում են մի  
շարք մեթոդիկաներ (Т.В.Бендас, 2005): Սակայն այդ մեթոդիկաներն  
ուղղված են անհատի հոգեբանական բնութագրերի կամ սոցիալական  
երևույթների ուսումնասիրմանը: Սեռական երկձևության ցուցանիշների  
ուսումնասիրման համար, տարբեր շարժողական ընդունակությունների  
դրսևորումներում, կրտսեր դպրոցականների համար, մենք կիրառել ենք  
Դ.Բարտցի (J.Bartz, 1987) մեթոդիկան:

Աղյուսակ 1-ից երևում է, որ դպրոցականների շարժողական պատ-  
րաստվածությունը բնութագրող սեռական երկձևության գործակցի արժեք-  
ների դինամիկան ունի նկատելի տարբերություններ՝ դրական և բացա-  
սական արժեքներով: Բոլոր դեպքերում, սեռական երկձևության գործակցի  
արդյունքների բացասական արժեքները վկայում են այն մասին, որ աղ-  
ջիկների արդյունքները բացարձակ արժեքով ավելի մեծ են, քան տղանե-  
րինը: Սեռական տարբերությունները շարժողական պատրաստվածության  
մեջ սկսում են դրսևորվել 2-րդ դասարանից սկսած, ինչը հետագայում  
մեծանում է:

Ստացված արդյունքները հաստատում են սեռական երկձևության  
ընդհանուր օրինաչափությունները, այսինքն՝ մեծ փոփոխականություն  
արական սեռի ներկայացուցիչների ցուցանիշներում և դրանց մեծ կայու-  
նություն իգական սեռի ներկայացուցիչների մոտ (Б.Г.Ананьев, 1980;  
Е.П.Ильин, 2007): Բնականաբար, սեռական երկձևության դրսևորումը  
կրտսեր դպրոցական հասակում իր վրա կրում է այնպիսի գործոնների  
ազդեցությունը, ինչպիսիք են, օրինակ՝ ֆիզիկական դաստիարակության  
դրվածքը դպրոցում, նպատակաուղղված ազդեցությունների բացակա-  
յությունը հատուկ միջոցների և մեթոդների տեսքով, հաճախակի՝ կրտսեր  
դպրոցականների սեռական առանձնահատկությունների անտեսումը:

Ստացված նյութի վերլուծության արդյունքները չորս ելակետային  
հատկանիշներով՝ տարիքային տեղաշարժերի դինամիկան, տղաների և

աղջիկների միջև **t**-տարբերությունները, հարակից դասարանների միջև եղած **t**-տարբերությունները և սեռական երկձևության գործակիցը վկայում են մի շարք թեստերում 3-րդ դասարանից սկսած տղաների և աղջիկների միջև եղած տարբերության մեծացման մասին:

Բացի դա, հաջողվել է ընդգծել կոնկրետ շարժողական ընդունակություններ, որոնք ենթակա են նպատակաուղղված մշակման հանրակրթական դպրոցի 3-4-րդ դասարաններում՝ հաշվի առնելով սեռային առանձնահատկությունները:

**Աղյուսակ 1.**  
**Սեռական երկձևության գործակից մեծությունները WD**


Ցուցանիշներ	Դասարաններ			
	1	2	3	4
Վազք 10մ ընթացքից, վրկ.	0.92	-0.57	-0.35	-0.29
Դեռացատկ տեղից, սմ	0.43	0.92	0.18	1.06
Դաստակի ուժ, կգ	0.51	-0.06	0.29	-0.01
Ֆլամինգո, վրկ.	-0.06	0.04	-0.16	0.5
Թեքում առաջ, սմ	0.08	-0.01	-0.01	-0.26
Մաքովազք 4x5, վրկ.	-0.23	-0.24	-0.23	-0.59
Շարժումների հաճախականություն, քանակ	-0.30	-0.07	-0.11	0.29
Նետումներ, միավոր	0.16	0.4	0.12	-0.31

Նկար 1-ում երևում է, որ 3-րդ դասարանում տղաների մոտ հավասարաչափ պետք է մշակել արագաշարժությունը, ճկունությունը և հավասարակշռության պահպանման կարողությունը, իսկ աղջիկների մոտ՝ ցատկունակությունն ու շարժումների հաճախականությունը: 4-րդ դասարանում համապատասխանաբար՝ արագաշարժություն, ճկունություն և շարժումների ճշգրտություն, ճարպկություն և մկանային ուժ, իսկ աղջիկների մոտ՝ ցատկունակություն, հավասարակշռություն, ճարպկություն և շարժումների հաճախականություն:


Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակության տեսության և պրակտիկայի համար առկա է սեռական երկձևության խնդիրը, այսինքն սեռերի առանձնացումն ըստ կենսաբանական հատկանիշների: Կրտսեր դպրոցականների սեռային առանձնահատկությունների հաշվառմամբ ֆիզիկական կուլտուրայի դասերի կազմակերպման և անցկացման ստրատեգիայի որոշման ժամանակ մտածված և նպատակաուղղված

մոտեցումը, բնականաբար ենթադրում է համապատասխան ֆիզիկական վարժությունների, դրանց կատարման մեթոդների ընտրություն, բեռնվածության կոնկրետ չափավորում և բժշկամանկավարժական հսկողություն ուսումնական գործընթացում: Հենց այս հարցերն էլ դարձան հատուկ հետազոտման առարկա:

### 3-րդ դասարան



### 4-րդ դասարան



- 1 - արագաշարժություն, 2 ճկունություն, 3 – հավասարակշռություն,  
 4 - ճշգրտություն, 5 - ճարակություն, 6 – ուժ, 7 – ցատկունակություն,  
 8 – հաճախականություն

**Նկ. 1. Նպատակաուղղված մշակման համար վերլուծության արդյունքում բացահայտված շարժողական ընդունակությունները**

ԵՐՐՈՐԴ ԳԼԽՈՒՄ՝ «Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության մեթոդիկայի հիմնավորումը գենդերային մոտեցմամբ» քննարկվում են հետազոտության իրականացման միջոցները ու մեթոդները, փորձարարության արդյունքները: Սեռական երկձևության հիմնականորի

մանրակրկիտ ուսումնասիրությունը թույլ է տվել հանգելու մի շարք եզրակացությունների.

1) սովորողների շարժողական ընդունակություններ գնահատման ժամանակ պետք չէ հիմնվել միայն միջին տարիքային նորմատիվների վրա՝ հաշվի չառնելով սեռական առանձնահատկությունները:

2) Անցումը դաստիարակության և ուսուցման զարգացող ժողովրդավարական և մարդասիրական համակարգի պահանջում է յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունների, նրա ընդունակությունների և հնարավորությունների խիստ մոտեցում:

3) Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչների 75 %-ը օբյեկտիվորեն գտնում են, որ դասերը տղաների և աղջիկների մոտ պետք է տարբերվեն: Այսօր դպրոցական կրթական համակարգում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ հարկավոր է լուծել կարևոր մանկավարժական խնդիր՝ միաժամանակ ուսուցանել բոլորին, սակայն տարբեր ձևերով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները:

Այս խնդիրը հատկապես սեռական պատկանելիության և սեռական երկձևության հաշվառման կտրվածքով դեռ բավարար չափով մշակված չէ և գտնվում է հետագա ուսումնասիրման փուլում:

Սեռական երկձևության հաշվառմամբ կրտսեր դպրոցականների շարժողական ընդունակությունների մշակման մեթոդիկայի համար հիմք են հանդիսացել հետևյալ գործոնները. հիմնահարցին առնչվող գրական տեղեկությունների վերլուծություն և ընդհանրացում, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի պետական դպրոցական ծրագրի բովանդակության վերլուծությունը: Արդյունքում 3-4-րդ դասարանների տղաների (19) և աղջիկների (26) համար առանձին-առանձին տեղայնացվել են 45 ֆիզիկական վարժություններ, ինչպես նաև դրանց ծավալային բնութագրերը (աղ. 2): Այս վարժությունները մանկավարժական գիտափորձի ընթացքում օգտագործվել են սովորողների մոտ 6 շարժողական ընդունակությունների առարկայական զարգացման համար:

## Աղյուսակ 2

### Տարբեր շարժողական ընդունակությունների մշակման ընթացքում բեռնվածության ծավալի միջին ցուցանիշները (տոկոսներով)

Շարժողական ընդունակություններ	3-րդ դասարան		4-րդ դասարան	
	Տղաներ	Աղջիկներ	Տղաներ	Աղջիկներ
Արագաշարժություն	10	10	10	-
ճկունություն	15	15	-	-
Մկանային ուժ	-	20	20	20
ճարպկություն	-	15	15	15
Հավասարակշռություն	10	-	10	10
Ցատկունակություն	-	-	15	15

Հետագայում նշված մշակումների հիման վրա կազմվել է ֆիզիկական կուլտուրայի փորձարարական դասերի կազմակերպման և անցկացման կառուցվածքը (աղ. 3): Այստեղից պարզ է դառնում, որ սեռական երկձևության հաշվառումը ենթադրում է տղաների և աղջիկների ինչպես համատեղ, այնպես էլ առանձին պարապմունքներ: Համաձայն առարկայի պետական ծրագրի ֆիզիկական կուլտուրայի դասի ներգրավիչ մասում պարապմունքների ուղղվածությունը և բեռնվածությունը երկու սեռի աշակերտների համար նույնն են: Գրեթե այդպիսին է ուղղվածությունը և ֆիզիկական կուլտուրայի դասի եզրափակիչ մասում:

**Աղյուսակ 3**

**Ֆիզիկական կուլտուրայի դասերի փորձարարական կառուցվածքը  
3-4-րդ դասարաններում**

Դասի մասերը	Պարապմունքի ձևը	Պարապմունքի ուղղվածությունը	Բեռնվածության բնույթը
I	համատեղ	միանման է տղաների և աղջիկների համար	պետական ծրագրին համապատասխան
II	առանձին-առանձին	1. առանձին շարժողական ընդունակությունների տարբերակված և շեշտադրված մշակումը՝ WD-հաշվառմամբ 2. գործունեության անհատկացված ձևեր	1. ֆիզիկական վարժությունների տարբերականցված ծավալ և լարվածություն 2. ֆիզիկական դաստիարակության միջոցների տեղայնացված ընտրություն
III	համատեղ	շարժախաղեր, փոխանցավազքեր	պետական ծրագրին համապատասխան

Դասի հիմնական մասը սկզբունքայնորեն տարբեր է տղաների ու աղջիկների համար, անցկացվում է առանձին-առանձին՝ սեռական երկձևության ցուցանիշների խիստ հաշվառմամբ: Սրան համապատասխան 3-րդ և 4-րդ դասարանի տղաներն ու աղջիկները կատարում են վարժություններ ուղղված այն շարժողական ընդունակությունների կատարելագործմանը, որոնք նրանց մոտ բավականաչափ զարգացած չեն:

Մանկավարժական գիտափորձն անցկացվել է Երևանի թիվ 52 (փորձարարական) և թիվ 4 (ստուգողական) դպրոցներում: Փորձարարությանը ընդհանուր առմամբ մասնակցել է 187 սովորող, մանկավարժական փորձարարությունը տևել է մեկ ուսումնական տարի, և ընդհանուր առմամբ անցկացվել են 64 ֆիզիկական կուլտուրայի փորձարարական դասեր: Ստուգողական 3-րդ և 4-րդ դասարաններում ֆիզիկական կուլտուրայի դասերն անցկացվել են ավանդական համատեղ մեթոդով՝ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի պետական ծրագրի պահանջներին համապատասխան: Փորձարարական դասարաններում

Ֆիզիկական կուլտուրայի դասերին մեծ տեղ է հատկացվել ֆիզիկական բեռնվածության կարգավորմանը: Ֆիզիկական բեռնվածությանը դարձրածանների օրգանիզմի ռեակցիայի առավել օբյեկտիվ ցուցանիշը հանդիսանում է սրտի կծկումների հաճախականությունը:

Մանկավարժական փորձարարության արդյունքում առավել էական տեղաշարժեր են նկատվել փորձարարական դասարանների աշակերտների մոտ (աղ. 4, նկ. 2)

**Աղյուսակ 4**


**Շարժողական պատրաստվածության ցուցանիշերի տեղաշարժերը փորձարարության արդյունքում, x±m**

Ցուցանիշները	սեռ	3-րդ դասարան		
		մինչև	հետո	P,%
Արագաշարժություն, վրկ.	Տղ.	2.52 ± 0.01	2.45± 0.01	>0.1
	Աղ.	2.53 ± 0.03	2.40± 0.03	>5
Ցատկունակություն, սմ	Տղ.	110.4±5.2	126.7±2.9	>1
	Աղ.	109.4±0.8	112.7±0.9	>1
Մկանային ուժ, կգ	Տղ.	4.53± 0.39	6.27±0.19	>1
	Աղ.	3.8± 0.9	5.6± 0.32	>0.1
Հավսարակչություն, վրկ.	Տղ.	16.2± 0.33	18.0± 0.37	>0.1
	Աղ.	18.5± 0.33	20.0± 0.39	>1
ճկունություն, սմ	Տղ.	3.4± 0.2	4.4± 0.22	>0.1
	Աղ.	3.3± 0.15	4.2± 0.2	>0.1
ճարակություն, վրկ.	Տղ.	10.9± 0.33	9.64± 0.51	>0.1
	Աղ.	13.1± 0.14	12.4± 0.20	>0.1
Ցուցանիշները	սեռ	4-րդ դասարան		
		մինչև	հետո	P,%
Արագաշարժություն, վրկ.	Տղ.	2.28± 0.03	2.16± 0.02	>0.1
	Աղ.	2.5 ± 0.4	2.3± 0.03	>0.1
Ցատկունակություն, սմ	Տղ.	115.0±1.32	121.9±1.12	>0.1
	Աղ.	115.3±0.6	118.3±0.83	>1
Մկանային ուժ, կգ	Տղ.	7.9± 0.17	9.1±0.26	>0.1
	Աղ.	5.1± 0.32	6.3± 0.4	>1
Հավսարակչություն, վրկ.	Տղ.	16.7± 0.57	19.3± 0.63	>1
	Աղ.	16.8± 0.28	17.8± 0.4	>0.1
ճկունություն, սմ	Տղ.	3.7± 0.11	4.2± 0.17	>1
	Աղ.	3.8± 0.13	4.3± 0.14	>1
ճարակություն, վրկ.	Տղ.	10.7± 0.24	9.5± 0.21	>0.1
	Աղ.	12.3± 0.28	11.0± 0.22	>0.1


3-րդ դասարանի տղաների մոտ դրանք ցատկունակության և ճարպկության ցուցանիշներն են, իսկ աղջիկների մոտ՝ մկանային ուժի, ինչ վերաբերում է 4-րդ դասարանին, ապա տղաների մոտ առավելապես աճել են ցատկունակության և հավասարակշռության պահպանման արդյունքները, իսկ աղջիկների մոտ ավելանում են նաև ճարպկության ցուցանիշները: Միևնույն ժամանակ ստուգողական 3-րդ դասարանի տղաների մոտ գերակշռում են ցատկունակության և շարժումների ճարպկության, իսկ աղջիկների մոտ՝ ճկունության ցուցանիշները:

Սպորտային մանկավարժության մեջ անհատական մոտեցումը ենթադրում է գենդերային տարբերությունների խիստ հաշվառում, ինչը հատկապես կարևոր է դպրոցականների մոտ շարժողական ընդունակությունների մշակման ժամանակ:

### 3-րդ դասարան



### 4-րդ դասարան



**Նկ. 2. Կրտսեր դպրոցականների ֆունկցիոնալ և հոգեբանական հնարավորությունների տեղաշարժերը փորձարարության արդյունքում**

A - փորձարարական դասարաններ,

B – ստուգողական դասարաններ,

1- թոքերի կենսական տարողություն, սմ<sup>3</sup>

2-աշխատունակություն, պ.մ.,

3-ուշադրության կենտրոնացում, վ

Միևնույն ժամանակ, մեր փորձարարական հետազոտությունների արդյունքում ապացուցվեց, որ առանձնացված ուսուցման և դաստիարակման մասնակի կիրառման դեպքում ավելի հեշտ են լուծվում անհատական մոտեցման, բեռնվածության տարբերակնացման, ֆիզիկական կուլտուրայի դասի զարգացող ուղղվածության ապահովման խնդիրները:

Չնայած առանձնացված ուսուցումը խորհուրդ է տրվում բարձր դասարաններում, սակայն մենք կարծում ենք այն պետք է անցկացնել արդեն իսկ առաջին դասարանից:

Այսպիսով, ֆիզիկական դաստիարակության մեջ գենդերային մոտեցման տեսության մշակումը, մեր կարծիքով, նոր քայլ է ֆիզիկական դաստիարակության մանկավարժությունում: Սրա հետ կապված հավանաբար հարկավոր է վերանայել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի պետական ծրագրի բովանդակությունն ու ուղղվածությունը:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Անցկացված հետազոտությունների հիման վրա հնարավորություն է ընձեռնվում կատարելու հետևյալ եզրակացությունները.

1. Բացահայտվել են սեռական երկձևության առանձնահատկությունները, որոնք դրսևորվում են հետևյալում.

- սեռական երկձևությունը դրսևորվում է այս կամ այն շարժողական ընդունակության զարգացման նախնական մակարդակում, դրանց ցուցանիշների աճի դինամիկայում, տեղաշարժերի անհամաչափության և տարաժամկետության մեջ, ինչը հաստատում է տարիքասեռային զարգացման օրինաչափությունները: Չի հաստատվում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ծրագրում ամրագրված փաստը՝ կապված կրտսեր դպրոցականների շարժողական պատրաստվածության ցուցանիշներում սեռական երկձևության բացակայության հետ,

- շարժողական պատրաստվածության մակարդակում սեռական տարբերությունները սկսում են դրսևորվել 3-4-րդ դասարանից սկսած, ինչը հաստատվում է ոչ միայն բացարձակ մեծություններով, այլև տարբերությունների է-չափանիշով, հարաբերակցությունների տոկոսներով և սեռական երկձևության գործակիցներով,

- կրտսեր դպրոցական տարիքում սեռական երկձևության դրսևորումը ենթարկվում է այնպիսի գործոնների ազդեցության, ինչպիսիք են ֆիզիկական դաստիարակության դրվածքը, նպատակաուղղված ներգործության բացակայությունը հատուկ միջոցների և մեթոդների տեսքով, սովորողների սեռական առանձնահատկությունների հաշվառման անտեսումը:

2. Կրտսեր դպրոցականների շարժողական պատրաստվածությունը նպատակահարմար է գնահատել հինգ աստիճանով՝ բարձր,

միջինից բարձր, միջին, միջինից ցածր և ցածր: Այսպիսի գնահատումը թույլ է տալիս ֆիզիկական կուլտուրայի դասերի ժամանակ կախված երեխաների սեռից և շարժողական պատրաստվածության աստիճանից, տարբերականացման մոտեցման կիրառման ճանապարհով բարձրացնել շարժողական ընդունակությունների ղեկավարման արդյունավետությունը:

3. Ֆիզիկական դաստիարակության մեջ գեներային մոտեցումը ենթադրում է անհատական մոտեցում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի ընդունակություններն ու հնարավորությունները: Հարկավոր է հաշվի առնել ներգործության յուրահատկությունները տղաների և աղջիկների զարգացման վրա, ուսումնադաստիարակչական գործընթացի բոլոր գործոնների վրա՝ ուսուցման միջոցների և մեթոդների, մանկավարժական շփման, բեռնվածության չափավորման, ֆիզիկական կուլտուրայի դասերին սոցիալիզացման: Պետք չէ աղջիկներին ավելի մանեցնել տղաներին, իսկ տղաներին՝ աղջիկներին, անհրաժեշտ է երկու սեռի դպրոցականներին օգնել առավել ամբողջությամբ իրականացնել սեփական ընդունակությունները շարժողական գործունեության մեջ:

4. Մանկավարժական փորձարարության արդյունքում հնարավոր է դառնում ընդգծել հետևյալ դրույթները.

- կրոսեր դպրոցականների շարժողական ներուժի կատարելագործման արդյունավետ ուղղությունը սեռական երկձևության խստագույն հաշվառումն է, ինչը թույլ է տալիս սովորողների բնածին ընդունակությունների կատարելագործման նպատակով ֆիզիկական դաստիարակության մեջ գեներային մոտեցման իրական հնարավորություններ գտնել,

- սեռական երկձևությունից կախված դասարանի բաժանումը տղաների և աղջիկների, ֆիզիկական կուլտուրայի դասերը տարբերականացված անցկացնելու հնարավորություն է ընձեռում,

- առանձնացված ուսուցման և դաստիարակման դեպքում ավելի հեշտ են լուծվում անհատական մոտեցման, բեռնվածության տարբերականացման և ֆիզիկական կուլտուրայի դասի մարզումային ուղղվածության խնդիրները,

5. Մանկավարժական թեստավորումը փորձագիտական աշխատանքի վերջում թույլ է տվել բացահայտել էական տարբերություններ կրոսեր տարիքի մեաջատար շարժողական ընդունակությունների տեղաշարժերի դիմադիկայում գեներային առումով, ինչը իր արտացոլումն է գտել հետևյալում.

- առարկայական ուղղվածությամբ մանկավարժական ներգործության արդյունքում բավական հավաստի են նշանակելիության մակարդակի տեղաշարժերը ( $P > 0,1\%$ ) հաշվարկված 58 տոկոսի դեպքերում, իսկ միջին նշանակելիության 42 տոկոսի:

- փորձարարական դասարանի սովորողների աշխատունակության ցուցանիշները հավաստիորեն բարելավվել են 75 տոկոս, իսկ ստուգողական դասարաններում՝ 25 տոկոս դպրոցականների մոտ:

6. Կրտսեր դպրոցականների շարժողական ընդունակությունների մշակման գործընթացում նպատակահարմար է հիմնվել ֆիզիկական բեռնվածության հետևյալ օրինակելի ծավալի վրա, որի ցուցանիշների արդյունավետությունը ապացուցված է ձևավորվող մանկավարժական գիտափորձի ընթացքում.

**3-րդ դասարան** - արագաշարժություն՝ ֆիզիկական կուլտուրայի դասերի ընդհանուր ծավալի 10 տոկոս (տղաներ, աղջիկներ),

- ճկունություն՝ 15 տոկոս (տղաներ, աղջիկներ),
- մկանային ուժ՝ 20 տոկոս (աղջիկներ),
- ճարպկություն՝ 15տոկոս (աղջիկներ),
- հավասարակշռություն՝ 10տոկոս (տղաներ),

**4-րդ դասարան** - արագաշարժություն՝ 10 տոկոս (տղաներ),

- մկանային ուժ՝ 20 տոկոս (տղաներ, աղջիկներ),
- ճարպկություն՝ 15 տոկոս (տղաներ, աղջիկներ),
- հավասարակշռություն՝ 10 տոկոս (տղաներ, աղջիկներ),
- ցատկունակություն՝ 15 տոկոս (տղաներ, աղջիկներ):

7. Առաջադրված վարկածը՝ կապված կրտսեր դպրոցականների շարժողական ընդունակությունների մշակման ժամանակ սեռական երկձևության հաշվառման անհրաժեշտության հետ, հաստատվել է:

Սեռական երկձևության հաշվառմամբ մշակված և փորձարկված մեթոդիկական ավանդականի համեմատ առավել արդյունավետ է:

Սակայն սույն հետազոտությամբ չեն սպառվում ֆիզիկական դաստիարակության մեջ գեներդերային տարբերականացման հետ կապված բոլոր խնդիրները:

Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ են առավել նոր միջոցների, մեթոդների և մանկավարժական մոտեցումների հետազոտություններ:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.**

1. Մարտիրոսյան Ա.Վ., Ղազարյան Ֆ.Գ., Գեներդերային մոտեցումը ֆիզիկական դաստիարակության գործընթացում // Մանկավարժություն – 2013.-N1.- էջ 17-20:

2. Մարտիրոսյան Ա.Վ., Շարժողական պատրաստականությունը և սեռական երկձևությունը. – Հանրապետական XL գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր.- Երևան. -2013.-էջ 215-218:

3. Մարտիրոսյան Ա.Վ., Աշակերտների գեներդերային ուսուցումը և դաստիարակությունը ֆիզիկական կուլտուրայի դասերին // Մխիթար Գոշ.- 2014.-N 1(40).-էջ 153-155:

4. Мартуросян А.В., Моторика младших школьников и проявление полового диморфизма. Годичная научная конференция. Сборник научно – методических статей. – Ереван: РАУ. - 2015.- с. 153-156.

**Мартirosян Ани Василевна**

**МЕТОДИКА РЕАЛИЗАЦИИ ГЕНДЕРНОГО ПОДХОДА В  
ПРОЦЕССЕ ФИЗИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 "Методика преподавания и воспитания" (физическая культура).

Защита состоится 17 марта 2016г. в 12<sup>00</sup> часов на заседании специализированного совета 020 ВАК "Педагогика" по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Меца 17.

**РЕЗЮМЕ**

**Актуальность исследования.** Закон РА об образовании требует коренного улучшения образовательного процесса, укрепления здоровья учащихся, нормализации учебной нагрузки, проведения мониторинга физического развития и двигательной подготовленности учащейся молодежи.

Ежегодно в школу приходят не просто дети, а мальчики и девочки со свойственными им особенностями умственного, психического, биологического и, конечно, двигательного развития. В то же время школа готовится к встрече с детьми, но не с мальчиками и девочками. В педагогической литературе все усреднено, не учитывается пол ребенка, нет специальных программ и методик отдельно для разнополых детей. Система образования, зачастую, игнорирует половые особенности учащихся, обучая и воспитывая их без учета фундаментального закона природы и общества - полового диморфизма. Между тем, изучение признаков полового диморфизма может дать качественно новую информацию о колебаниях двигательной нормы у человека.

Гендерная проблематика в педагогике физического воспитания наименее разработана. Следует отметить, что действующая государственная программа по физическому воспитанию (2007) рассчитана на среднестатистического учащегося, а сам этот процесс недостаточно учитывает гендерные особенности школьника, за исключением старших классов. Однако, половые различия имеются у детей с самого рождения. Поэтому объективные научные сведения о наличии полового диморфизма, или, наоборот, его отсутствии самым

существенным образом могут влиять на стратегию и тактику физического воспитания.

**Цель исследования** - обосновать применение коэффициента полового диморфизма в качестве критерия дифференцированного подхода в физическом воспитании.

**Научная новизна.** Диссертационная работа является началом цикла исследований по внедрению гендерного подхода в процесс физического воспитания в Армении. Уточнены особенности возрастных изменений показателей двигательной подготовленности младших школьников и разработаны модельные шкалы для оценки физического состояния учащихся. Экспериментально обоснована методика дифференцированного подбора средств и методов двигательной подготовки с учетом полового диморфизма.

**Теоретическая значимость** заключается в разработке научно обоснованной методики двигательного совершенствования с учетом половых особенностей школьников младшего возраста и способах ее оценки. Исследование вносит некоторый вклад в разработку теоретических основ реализации гендерного подхода в системе физического воспитания в общеобразовательной школе, расширяет и дополняет знания в этой области.

**Практическая значимость.** Полученные результаты могут способствовать совершенствованию опыта педагогической деятельности в общеобразовательной школе, дифференцированному подбору средств и методов физической подготовки мальчиков и девочек. Материалы диссертации могут быть использованы при разработке новых учебных программ и пособий, учитывающих половые особенности учащихся, при изучении специальных дисциплин в физкультурных и педагогических учебных заведениях.

**Достоверность и обоснованность основных положений и выводов** обусловлены целостным подходом к исследованию проблемы, непротиворечивостью организации и логики проведения исследования современным представлением о гендерном подходе, корректностью его методологического аппарата, адекватностью методов исследования его объекту, цели, задачам и логике. Достоверность исследования достигнута также изучением большого массива источников на языке оригинала.

**Структура и объем диссертации.** Работа состоит из введения, трех глав, выводов, списка использованной литературы и приложений. Диссертация изложена на 128 страницах компьютерного текста, содержит 27 таблиц и 4 рисунка.

**Ani Vasil Martirosyan**

**METHODS OF REALIZATION GENDER APPROACH IN THE  
PROCESS OF PHYSICAL EDUCATION**

Thesis for the degree of candidate of Pedagogical Sciences, speciality 13.00.02 -"Methods of Teaching and Education" (Physical Culture).

The defense of the thesis will be held at 12 am on March, 2016, at the sessions of Special Board 020 HAC (Pedagogy) to award degrees under KH. Abovyan Armenian State Pedagogical University, address: 0010, Tigran Mets avenue 17, Yerevan.

**SUMMARY**

**The relevance of the research:**

The law on education of the RA requires radical improvement of the educational process, strengthening of the students' health, normalization of the teaching load, monitoring of physical development and motor preparedness of young students. Every year boys and girls, who are not just children, come to school with their mental, psychological, biological, and, of course, motor development characteristic features. At the same time school gets ready to meet not boys and girls, but children. In pedagogical literature everything is averaged: the child's sex is not taken into consideration, there are no special programs and methods for children of different sexes. Education system often ignores the sexual features of students, teaching and educating them without taking into account the fundamental law of nature and society - sexual dimorphism. Meanwhile, the study of sexual dimorphism symptoms can give qualitative new information on fluctuations of human motor standards.

The gender issues on physical education pedagogy are less developed. It should be mentioned that the existing state program on physical education (2007) is calculated on medium static students and the process itself does not pay enough attention to students' gender features with the exception of high school students. However, the sex differences in children are from their birth. Therefore, objective scientific information about the presence of sexual dimorphism or, conversely, its absence can significantly influence on the strategy and tactics of physical education.

**The aim of the research** is to substantiate the application of the coefficient of sexual dimorphism as a criterion for a differentiated approach in physical education.

**The scientific novelty of the research:** The thesis starts the cycle of studies on introduction of gender approach in the process of physical

education in Armenia. The features of age-related changes of younger students' motor training indicators have been specified and the scale model to assess the physical condition of the students has been developed. The methods of differentiated selection of means and methods of motor training based on sexual dimorphism have been experimentally substantiated.

**The theoretical significance** lies in the development of scientifically substantiated motor perfection method based on the sexual characteristics of younger age students and the means of its assessment. The study makes a contribution to the development of the theoretical foundations of the implementation of gender approach in the system of physical education in secondary school, expands and complements the knowledge in this field.

**The practical significance of the research:** The obtained results can contribute to the perfection of the pedagogical activity experience in secondary school, differentiated selection of means and methods of physical training of boys and girls. The thesis materials can be used in the development of new educational programs and aids based on the gender characteristics of students, in studying of special disciplines in sports and pedagogical educational institutions.

**The accuracy and validity of the main provisions and conclusions** are conditioned by the complete approach to the problem study: non- discrepancy of the organization and the logic of conducting the study to the modern concept of gender approach; the correctness of its methodological apparatus; adequacy of research methods to its object, goals, objectives and logic. The accuracy of the research has also been achieved by a large array of sources in their original language.

**The structure and volume of the dissertation:** The dissertation consists of an introduction, three chapters, conclusions, list of literature used and appendix. The dissertation is written on 128 pages of computer text and contains 27 tables and 4 pictures.

A handwritten signature in dark ink, appearing to read 'M. Arakelyan', is centered on the page. The signature is fluid and cursive, with a horizontal line underneath.

